

ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵՍՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Թիվ 32 *)

ԳԵՐՄԱՆԻԱ. ԵԽ ԽՈՌՀ. ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ռուս - գերմանական լրացուցիչ դաշնագիր Բրեստ - Լիտովսկի հաշտութեան դաշնագրի : Բերլին, 27 Օգոստ . 1918 թ . :

(Լիազօրներ՝ Ռուս . Սոց . Դաշն . Խորհ . Հանրապետութեան՝ Եօֆէ , Գերմանիայի՝ Հինգէ Հւ Քրիգէ) :

ԳԼՈՒԽ Բ . , 30Դ . 4 .

Ու չափով որ . . . չէ որոշւած այլ կերպ , Գերմանիան բնաւ չի խառնւի ոռւս պետութեան ու նրա առանձին երկրամասերի յարաբերութեանց մէջ ևւ , հետեւաբար , ի մասնաւորի , ո՞չ առաջ կը բերէ ևւ ո՞չ էլ կօժանդակէ այդ երկրամասերում ինքնուրոյն պետական մարմիններ ստեղծւելուն :

ԳԼ . Զ . , ԿՈՎԿԱՍ .

30Դ . 13 . - Ռուսաստանը յայտնում է իր համաձայնութիւնը , որ գերմանիան հանաչէ ՎՐԱՍՏԱՆԻ իբրեւ պետական ինքնուրոյն մարմին :

Յօդ . 14 . - Գերմանիան ցոյց չի տայ աջակցութիւն որ եւ է երրորդ պետութեան , պատերազմական հնարաւոր գործողութիւնների միջոցին կովկասում՝ Վրաստանի եւ այն շրջանների սահմաններից դուրս , որ յիշւած են հաշտութեան դաշնագրի յօդ . 4 , պարբ . 3-ում : Նա [Գերմանիան] դործ կը դնէ իր ազդեցութիւնը , որ կովկասում երրորդ պետութեան [ակնարկութիւն՝ Տաճկաստանին] պատերազ-

*) Նախորդը տե՛ս «Վեմ»-ի 1938 թիւ 1-ում :

մական ուժերը չանցնեն հետեւեալ գիծը . . Կուր — . . . Շամախու զաւորի սահմանը . . . ուղիղ գծով մինչեւ այն կէտը, ուր միանում են Բագուի, Շամախու և Ղուրայի գաւառների սահմանները, ապա՝ Բագուի գաւառի հիւսիսային գծով, մինչեւ ծով : (Ռուսաստանի պարտաւորում է Գերմանիային տրամադրել ԲԱԳՈՒ արտադրւող նաւթի եւ նաւթային արտադրութիւնների քանակութեամ մէկ քառորդը : Գնման արժէքը հաշւակցւում է համաձայն յօդ . 12-ի, Ռուսաստանին տրամադրելի քարածուխի արժէքի հետ : Մնացորդը հաշւակցւում է 27 Օդոստ . Փինանսական համաձայնութեան [կայացւած նոյն 27 Օդոստ . 1918, Բերլին] յօդ . 3-ի ուժով Գերմանիային տալիք առնենքների արժէքի հետ) :

**

Լրացուցիչ դաշնագրի (27 Օդոստ . 1918, Բերլին) Գլ . Ե ., յօդ . 12 աւած է ի միջի այլոց .

Դոնեցի աւազանը գերման զօրքերի կողմից զրաււած մնալու ժամանակամիջոցում Ռուսաստանը այնուղից ստանում է այն քանակութեամբ քարածուխ , որ երեք անգամ աւելի է յօդւած 14-ի զօրութեամբ Գերմանիային տրամադրուող Բագուի նաւթից եւ չորս անգամ աւելի քարածուխ , քան նրան [Գերմանիային] հայթայթւող թենգինը :

Նոյն թւին եւ նոյն տեղ [27 Օդոստ . 1918 թ ., Բերլին] կայացւած Ֆինանսական համաձայնութեամ Յօդ . 2-ով Ռուսաստանը Գերմանիային պիտի վճարէ , ոռուների ձեռք առած [պատերազմական] միջոցների պատճառով տուժած գերմանացիներին հատուցում տալու համար , վեց միլիարդ մարդ :

Յօդ . 3 . [Մանրամասնութիւններ՝ այդ վեց միլիարդը վճարելու կարգի մասին : Մէկ մասը վճարուում է ոսկով եւ արժեթղթերով , միւս մասը՝ ապրանքներով . այս վերջինները մէկ միլիարդ արժէքով :]

**

ԹԻՒ 33

ԿԱՐՍ , ԱՐԴԱՀԱՆ , ԲԱԳՈՒՄ . . . ԲԱԳՈՒ

Թիւրքիոյ կողմից փաստական բարձումն Բրեստ - Լիտովսկի դաշնագրով նախատեսած ոուս - տաճկական յարաբերութեանց

պայմանների : Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործոց կոմիսար Զիշերինի յայտագիրը Տաճկաստանի արտաքին գործոց նախարարութեան , 20 Սեպտ . 1918թ . :

1918թ . Մարտ 3-ին Բրեստ - Լիտովսկում կնքւած հաշտութեան դաշնագրով որոշւած էին հողային - քաղաքական նոր յարաբերութիւններ Ռուսաստանի և Տաճկաստանի միջեւ :

Բրեստ - Լիտովսկի դաշնագրի 4-րդ յօդւածը վերապահում է իրաւունք նախագէս Ռուսաստանի Հանրապետութեան կազմի մէջ մտնող Կարսի , Արդահանի և Բարումի ազգաբնակութեան՝ «սահմանելու նոր կարգ , համաձայնութեամբ դրացի պետութեանց և մասնաւրապէս Տաճկաստանի » :

Վերոյիշեալ ըրջանների ճակատագիրը , նրանց միջազգային իրաւական գիրքը հարկ էր որ սահմանէր այդ ըրջանների բնակչութեան կամարտայացութեամբ : Եւ , սակայն , դաշնագիրը կնքելուց անմիջապէս յիտոյ՝ տաճիկ զինւորական ուժերը զրաւեցին այդ ըրջանները և այդտեղ կիրարեցին պատերազմական զրաւման բէժիմ : Միեւնոյն ժամանակ տեղի ունեցան այնտեղ անթոյլատրելի կողոպուտներ և բռնութիւններ խաղաղ ազգաբնակութեան վերաբերմամբ : Տաճկական վարչութիւն մտցնելու հետ միաժամանակ , կատարեցաւ 19 տարեկանից վեր արական ազգաբնակութեան պարտագիր գորահաւաք :

Ազգաբնակութիւնը , որի պատ կամարտայացութեամբ պէտք է որ սահմանէր նոր կարգը [Կարսի , Արդահանի , Բաթումի ըրջաններում] , նախագէս ահարեկման մատնեցաւ և այնպիսի պայմաններում զրւեցաւ , որոնց մէջ՝ [յիշեալ] երեք չսահմանելի բնակչութեան վերապահւած իրաւունքը վերածւեցաւ բացարձակ ծաղրանքի : Քըւէարկութեան նախօրէին աքսորւեցան , ձերբակալւեցան և շատ դէսքերում էլ մինչեւ իսկ դնդակահարւեցան պատւաւոր քաղաքացիներ , որոնց ազգեցութիւնը կարող էր ոչ ի նպաստ թիւրքիոյ լինել : Քըւէարկութիւնը տեղի ունեցաւ որոշապէս թիւրք իշխանութեանց վերհսկողութեան տակ՝ զոհէր պահանջելով իրենց վրէժինդրութեան և ծրագրած ձնշումների համար : Ու այդ պայմաններում տեղի ունեցած քէարկութեան արդիւնքները չէին կարող չնախորուել :

Ռուսաստանից պոկւած ըրջանների վերաբերմամբ կատարւած նման բռնութիւնը համարելով էական խախոսումն դաշնագրի [Բրեստ - Լիտովսկի] 4-րդ յօդւածի՝ խորհրդային կառավարութիւնը յայտարարում է այսու , որ նա չէ կարող համաձայն լինել Կարսի , Արդահանի և Բաթումի ազգաբնակութեան այսպէս անւանւած կամարտա-

յայտութեան արդիւնքներին եւ այդ աղբաբնակութեան իրաւունքը՝ սահմանելու նոր կարգ իր շրջանների համար՝ համարում է չօգտագործւած ու նոր կարգի խնդիրը յիշեալ շրջաններում՝ տակաւին բաց :

*

Հաշտութեան դաշնապրով [Բրեստ - Լիտովսկի] վերջ դաման պատերազմական գործողութիւնները Ռուսաստանի եւ Տաճկաստանի միջև, եւ, սակայն, դաշնապիրը կնքելուց անմիջապէս յետոյ Թիւրքիոյ կողմից վերանորոգւեցան եւ շարունակում են մինչեւ այս վայրկեանս : Միացած աւագակային հրոսակմբերի հետ՝ տաճկական կանոնաւոր զօրքերը գրաւում են Խորհրդային Հանրապետութեան հողամասը, քաղաքներ եւ դիւզեր մասնելով աւերմունքի ու կողապուտի, գնդակահարելով եւ կամ ամէն տեսակ բռնութեանց ենթարկելով քրիստոնեայ ազգաբնակութիւնը՝ չխնայելով նաեւ կանանց ու երեխաններին :

Խորհրդային կառավարութիւնը քանիցս բողոքել է Թիւրքիոյ կողմից պատերազմական գործողութիւնները շարունակելու դէմ, եւ, սակայն, բոլոր այդ բողոքները մնացել են անհետեւանք : Վերջապէս, այս տարւան յուլիս ամսոին տաճկական բանակը արշաւանքը ձեռնարկեց . ԲԱԳԻԻ դէմ եւ, խորհրդային զօրքերի հերոսական դիմաղրութիւնից յետոյ թշնամու գերազանց ուժերի դէմ, ճամբայ բաց արաւ իր առջեւ դէպի այդ քաղաքը, որ Ռուսաստանի Հանրապետութեան կարեւորագոյն քաղաքներից մէկն է : Խորհրդային կառավարութեան բոլոր բողոքներին օմաննեան կառավարութեան ներկայացուցիչները պատասխանում էին՝ ողարգապէս հերքելով բուն իսկ փաստը տաճկական յարձակման եւ կամ կոչում էին անում՝ թէ Բագրի մօտ որպէս թէ տեղական բնակիչներից բաղկացած անկանոն հրոսակներ են միայն գործում . այն ինչ՝ Բագրի վրա յարաձկումը կատարել է տաճկական կանոնաւոր բանակը եւ Շէվքէթ փաշան է, որ յուլիս 30-ին ազգաբնակութեանը կոչ է արել՝ պահանջելով քաղաքի յանձնումը :

Այժմ, երբ Բագր քաղաքը արգէն իսկ առնւած է ու տաճիկ զօրքերը բուն իսկ քաղաքի մէջ են զոնւում, երբ անպաշտպան բնակչութիւնը եւ ամբողջ քաղաքը մի քանի օր շարունակ ենթակայ են աւերի ու կողոպուտի սարսափներին տաճիկ զօրքերի կողմից, թաթար յելուզախմբերի հետ միասին, տաճիկ ներկայացուցիչների այն կոչումը՝ որպէս թէ Բագրի դէմ եղած յարձակման մասնակցել են միմիայն տեղական աւազակներ, նշանակում է՝ Ժիտել փաստերը ու ծաճկել Տաճկաստանի բռնի զործողութիւնները : Այդ ձեւով է ահա,

որ սիստեմաբար տեղի է ունեցել եւ տեղի ունի Բըեստ - Լիտովսկի դաշնագրի խախոսումն եւ ուղղակի յափշտակումն ու կողոպուտ Ռուսաստանի Հանրապետութեան հողամասերի:

Օսմանեան կառավարութիւնը անցած է էստարեան ընթացքում անընդհատ խախոսել է Բըեստ - Լիտովսկի դաշնագրիրը, հակառակ խորհրդային կառավարութեան բոլոր բողոքներին: Այժմ, ի վերջոյ եւ ի լրումն ամենայնի, նու յափշտակել ու ահոելի աւերմունքի է մատնել Ռուսաստանի Հանրապետութեան ամենանշանաւոր քաղաքներից մէկը: Օսմանեան կառավարութիւնը դրանով ցոյց տւաւ, որ Բըեստ - Լիտովսկի դաշնագրիրը արգէն գոյութիւն չունի Ռուսաստանի եւ Տաճկաստանի միջեւ: Ռուսաստանի Դաշնակցային Խորհրդային Հանրապետութեան կառավարութիւնը հարկադրուած է ընդունել, որ օսմանեան կառավարութեան գործողութիւնները փաստորէն վերացրել են այդ երկու պետութիւնների միջից Բըեստ - Լիտովսկի դաշնագրով Ռուսաստանի եւ Տաճկաստանի միջեւ հաստատւած խաղաղ յարաբերութիւնները:

*
**

Թիի 34

ՄՈՒԴՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐ

Զինադարար Դաշնակիցների եւ Տանկաստանի միջեւ, կնքեած 1918 թ. Հոկտ. 30-ին բրիտանական «Ագամեմնոն» նաւի վրա Մուդրոս նաւահանգիստում՝ Լեմնոս կղզիում:

(Լիազօրներ, Դաշնակիցների՝ կալտորալ, Տաճկաստանի՝ բառուի, Հիմքեր եւ Սահադուլլայ):

Յօդ. 1. - Դարգանէլի եւ Բոսֆորի բացումն եւ ազատ մուտք դէպի Սեւ Ծով:

Յօդ. 4. - Դաշնակից բոլոր պատերազմական գերիները, բոլոր հայ գերիները եւ բանտարկեալները պէտք է կ. Պոլիս հաւաքւին եւ Դաշնակիցներին յանձնուին առանց ո եւ է պարմանի:

Յօդ. 5. - Անյապաղ զօրքը բույսումն տաճկական բանակի, բացառութեամբ այն զօրքերի, որ անհրաժեշտ էն սահմանների պաշտպանութեան եւ ներքին կարգը պահպանելու համար...

Յօդ. 11. - ... Տաճկական զօրքերը արգէն ստացել են հրաման՝ պարպելու Անդրկովկասի մի մասը: Քատ որում՝ Ղայնտեղ, Անդրկովկասում] մնացած զօրքերը պիտի հեռացվին, եթէ տեղւոյն վրա զը-

բութիւնը ուստւմնասիրելուց յետոյ Դաշնակիցները պահանջելու լինին այդ :

Յօդ. 15.- Դաշնակից սպաներ կը նշանակւին՝ հսկելու համար բոլոր երկարուղագծերի վրա, մէջը հաշւելով և Անդրկովկասեան գրծերի այն մասերը, որ ներկայիս Տաճկաստանի վերհսկողութեան տակ են գտնւում : Դաշնակից պետութիւնների լիակատար անօրէնութեան տակ պիտի դրւին դրանք, հաշւի կառնւին և ազգարնակութեան կարիքները : Այս որոշումից հետեւում է, որ Դաշնակիցները իրաւունք ունին դրաւելու բարումը : Տաճկաստանը ո ևւ է տարկութիւն պիտի չանէ Բագուն Դաշնակիցների կողմից դրաւելուն դէմ :

Յօդ. 16.- Հեջապի, Ասիրի և Եէմէնի, Սուրբոյ և Միջազգեարի բոլոր սպահակազօրքերի անձնատութիւնը Դաշնակից հրամանատարութեան... Կիլիկիայից հեռանում են (տաճիկ զօրքերը) :

Յօդ. 24.- Երէ հայկական վիլայէքներից մէկում անկարգութիւններ ծագեն, Դաշնակիցները վերապահում են իրենց իրաւունք՝ գրաւելու նրա մէկ մասը :

Յօդ. 25.- Թշնամական դործողութիւնները Դաշնակիցների և Տաճկաստանի մէջ գաղարում են հինգշարթի, 1918 թ. Հոկտ. 31-ի կէս օրին, տեղական ժամանակով :

* * *

ԹԻՒ 35

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԶԵՂԵԱԼ Է ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ
ԲԲԵՍ - ԼԻՏՈՎԱԿԻ ԳԱՇՆԱԳԻՐԸ

Համառաւսական Կենարոնական Գործադիր կոմիտէի որոշումը՝
չեղեալ յայտարարելու Բրեստ - Լիտովսկի դաշնագիրը : Մոսկա, 13
նոյեմ. 1918 թ.:

Ռուսաստանի բոլոր ժաղովուրդներին, գրաւման ենթակայ բոլոր
չրչանների և հոգերի ընակչութեան .

Խորհուրդների Համառաւսական Կենար. Գործ. կոմիտէն սրա-
նով յայտարարում է հանգիսաւորապէս, թէ 1918 թ. Մարտ 3-ին
Բրեստում ստորագրւած հաշտութեան պայմանները այլեւ ի զօրու
չեն ու զուրկ են նշանակութիւնից : Բրեստ - Լիտովսկի դաշնագիրը
(այդպէս նաև՝ 27 Օգոստ. [1918 թ.] Բերլինում ստորագրւած ու
1918 թ. Մեպա. 6-ին Համառաւս. Կենար. Գործ. կոմիտէի կողմից)

Հաւերացւած լրացուցիչ համաձայնութիւնը) յայտաբարւում են չնշւած, ամբողջութեամբ և բոլոր կէտերով . . . :

**

Թիի 36

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԶԵՂԵԱԼ Է ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ
ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ

Ռուսաստանի Սոց. Դաշն. Խորհ. Հանրապետութեան արտաքին գործոց ժող. կոմիսարիատի 1918 թ. Դեկտ. 24-ի որոշումը՝ չճանաչելու Վրաստանը որպէս ինքնուրոյն պետութիւն:

Նկատի ունենալով այն, որ Ռուս. Սոց. Դաշն. Խորհ. Հանրապետութեան կառավարութիւնը Վրաստանը այժմ չի ճանաչում ինքնուրոյն պետութիւն, բոլոր նրանք՝ որ իրենք իրենց Համարում են Վրաստանի քաղաքացիներ, ճանաչում են Ռուսաստանի քաղաքացիներ, որպէս այդպիսիք, ենթարկելում են Ռուսաստանի Սոց. Խորհ. Հանրապետութեան խորհրդային իշխանութեան բոլոր հրամանադիրներին:

*

Նոյն թւին եւ նոյն օրը Խորհ. Ռուս.-ի արտ. գործոց կոմիսարիատը որոշում է կայացնում վերացնելու Ռուսայնական պետութեան վերաբերեալ բոլոր որոշումները: Եւ, «նկատի ունենալով, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը չեղեալ է յայտաբարել Ռուս.-ի Հանրապետութեան խորհրդային կառավարութիւնը», վերջինս այլեւս «չի ճանաչում Ռուսայնան որպէս ինքնուրոյն պետութիւն»:

**

Թիի 37

ԱՆԳԼԻԱՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Անգլեապարսկական համաձայնուրիւն, որ սահմանում է «բրիտանական օգնութիւն՝ օժանդակելու համար Պարսկաստանի յառաջդիմութեան եւ բարօրութեան»: Կնքած 1919 թ. Օգոստ. 9-ին, Թէհրանում:

(Լիազօրներ, Մէծն Բրիտանիայի՝ Քնքս, Պարսկաստանի՝ Վասուգ - էդ - Գովկ):

Յօդ. 2.- Բրիտանական կառավարութիւնը ի հաշիւ պարսիկ կառավարութեան կը տրամադրէ պատրաստակամ ծառայութիւնը այնպիսի փորձագէտ - խորհրդականների, որ երկու կառավարութեանց միջեւ կայանալիք խորհրդակցութիւնից յետոյ հարկաւոր կը համարւին պարսկական վարչութեան զանազան ճիւղերի համար :

Յօդ. 3.- Բրիտանական կառավարութիւնը ի հաշիւ պարսիկ կառավարութեան կը տրամադրէ սպաներ եւ արդիական տիպի կադմածներ ու հայթայթումներ ...

Յօդ. 4.- ... Բրիտանական կառավարութիւնը առաջարկում է տրամադրել պարսիկ կառավարութեանը մի կարեւոր փոխառութիւն... *)

Յօդ. 5.- Բրիտանական կառավարութիւնը... պատրաստ է գործակցիլ պարսիկ կառավարութեան... կառուցանելու թէ՛ երկաթուղիներ եւ թէ փոխադրութեան այլ միջոցներ :

Յօդ. 6.- [Համաձայնութիւն՝ վերանայելու պարսկական մաքսային սակագինը] :

ԾԱՆՈԹ. — Միաժամանակ, Քոքսը երկու յայտագիր ուղղեց վոսուգ - Էդ - Դովլիին : Առաջինում առած է՝ եթէ պարսիկ կառավարութեան ծրագրած բարենորոգումների նախադիծը ստորագրւի, այդ դէպքում բրիտանական կառավարութիւնը պատրաստ կը լինի պարսիկ կառավարութեանը օգնելու իր հետեւեալ նպատակների մէջ .

ա) Վերանայումն երկու կողմերի մէջ դոյութիւն ունեցող դաշնագիրների :

բ) Գոհացումն Պարսկաստանի պահանջների՝ ստանալ հատուցումն իր նիւթական այն վնասների համար, որ պատճառել են նրան պատերազմող միւս կողմերը :

գ) Պարսկաստանի սահմանների ուղղումն այն կէտերում, ուր արդար կը համարւի այդ :

[Երկրորդ յայտագրով կողմերը փոխադրձարար ազատ են կացուցւում վերը՝ Բ. կէտի տակ յիշատակւած նիւթական հատուցումներից] :

*
**

*) Երկու միլ. ֆ. ս.-ի փոխառութեան համաձայնութիւն — 7%-ով ու 20 տարվ — սոսրագրւեցաւ նոյն Օգոստ. 9-ին :

ԹԻՒ 38

ԶԻՉԵՐԻՆԻ ԿՈՉԸ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԲԱՆԻՌՈՆԵՐԻՆ ԵՒ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ

Խորհրդայրն Ռուսաստանի արտաքին գործոց կոմիսար Զիչերինի կողմից 1919 թ. 30 օգոստ. (Մոսկվա) Պարսկաստանի բանւորներին և զիւղացիներին ուղղած կոչի մէջ ասւած է, ի միջի այլոց:

Վերջին ամբողջ գարու ընթացքին ուռւ և անգլիական կառավարութիւնները ձեղ հետ վարւել են այնպէս, ինչպէս սորկացած ժողովրդի հետ...

Ընկ. Տրոցկին 1918 թ. յունիսը 14-ի իր յայտագրով *) հանդիպաւապէս աեղեկացրել է պարսիկ ժողովուրդին, թէ Ռուսաստանի ու Անգլիայի և միւս պետութեանց միջեւ կնքւած գաղտնի դաշնագիրները, որ վերաբերում են Պարսկաստանին և խախտում նրա անկախ պետութեան իրաւունքները, լուծուում են Ռուսաստանի կողմից և ուսւ ժողովուրդը Պարսկաստանին է վերադարձնում ամէն ինչ, որ լուել են նրանից, որ յափշտակել են պարսիկ ժողովրդից ցարական զօրավարները:

Պարսիկ կառավարութիւնը եւս իր կողմից ջնջւած է յայտարարել նման բոլոր դաշնագիրները: Թւում էր, թէ պարսիկ ժողովրդի համար պիտի սկսւէր մի նոր, աղատ կեանք ու նրա վերածնունդը՝ արտասահմանեան դիշատիչների դարաւոր լուծից յետոյ:

Եւ, սակայն, այդպէս չեղաւ: 1918 թ. գարնանը անգլիական զօրքերը աստիճանաբար գրաւեցին Պարսկաստանի ողջ հողամասը... Անգլիացիները իրենց սորուկը դարձրին պարսիկ ժողովուրդը:

... Անգլիացի դիշատիչը փորձում է պարսիկ ժողովուրդի վկին դցել վերջնական սորկացման պարանը:

Ռուսաստանի Հանրապետութեան խորհրդայրն բանւորա - զիւղացիական կառավարութիւնը յայտարարում է հանդիսաւորապէս, որ ինքը չի ճանաչում այդ սորկացումը իրականացնող անգլեապարսկական դաշնագիրը... [Տե՛ս վերը, թիւ 37]:

Ի ահս սրիկայական և աւագակային այն գործի, որ գլուխ են բերել անգլիացիք պարսիկ կառավարութեան հետ միասին, մենք մեր պարտքն ենք համարում մի անգամ եւս հաստատել այն, ինչ որ արել է ուսւ ժողովուրդը պարսիկ ժողովուրդի համար եւ որ ասւած

*) [Առաջ չէ բերւած կլիւչնիկովի եւ Սարանինի Ժողովածուի մէջ]:

է պարսիկ կառավարութեանը 1919 թ. յունիս 26-ին յղած մեր յայտագրի մէջ. *) հարկաւ, պարսիկ կառավարութիւնը այդ բանը ծածուկ է պահել պարսիկ ժողովուրդից : [Այս է՝]

Զեղեալ են յայտարարում ցարական պարտավութեանց հիման վրա Պարսկաստանի [ստանձնած] բոլոր վճարումները :

Ռուսաստանը միանգամ ընդ միշտ դադարեցնում է ամէն կարգի միջամտութիւն Պարսկաստանի հկամոււնների վերաբերմամբ :

Կասպից ծովը, երբ մաքրւած կը լինի անդլիական աշխարհակալութեան աւազակային նաւերից, ազատ կը հռչակւի պարսիկ դըրօշը կրող նաւերի համար :

Խորհրդային Ռուսաստանի եւ Պարսկաստանի ՍՍՀՄԱՆՆԵՐԸ կորչուին՝ համաձայն ազատ կամարտայայտութեան սահմանամերձ հողամասի վրա ապրող բնակիչների :

Ռուսկան արքունի եւ մասնաւոր բոլոր նախկին կոնցեսիաները դադարում են դոյցութիւն ունենալուց :

Վերացնում է հիւսատոսական իրաւորարութիւնը :

Պարսկաստանի Զեղչի եւ Փոխատւութեան Դրամատունը [ռուսական հիմնարկութիւն], ոռուսների ձեռքում գտնուող բոլոր երկաթուղարձերը, խճուղիները, նաևահանգստային կազմածները, թղթատարական հիմնարկութիւնները, հեռախոսային, հեռադրական դժերը Պարսկաստանում՝ յանձնուում են ազատ, անկախ պարսիկ ժողովուրդին ի սեփականութիւն եւ օգտագործում : Զնշւում կամ վերացնում են բոլոր միւս հիմնարկութիւնները կամ կարգադրութիւնները, որ պարսիկ ժողովուրդը դնում են ստորադաս վիճակի մէջ եւ կամ պատճառում միջամտութիւն՝ նրա ներքին կեանքի մէջ :

Մօ՛տ է ձեր ազատագրման ժամանակը : Շուտով կը հնչէ նաև անդլիական զրամատիրութեան հատուցման ժամը... Մեր կարմիր Բանակը արդէն չուտով կանցնի Կարմիր Թուրքեստանի վրայով դէսլի տակաւին ստրկացեալ Պարսկաստանի սահմանը...:

*
**

Թիի 39

ԶԻՉԵՐԻՆԻ ԿՈՉԲ
ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԲԱՆԽՈՐՆԵՐԻՆ ԵՒ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ

Խորհրդյին Ռուսաստանի արտաքին դուրծոց կոմիսար Զիչերինի

*) Զիայ Կլիւշնիկովի եւ Սաբանինի ժողովածուի մէջ :

կողմէց 1919 Սեպտ. 13-ին (Մոսկվա) Տաճկաստանի բանւորներին և դիւլացիներին ուղղած կոչք մէջ ասւած է, ի միջի այլոց.

Հնկերներ, բանւորներ եւ դիւլացիներ Տաճկաստանի...

... Զեկ յայտնի է, որ Ռուսաստանը հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ հրաժարւել է ո եւ է ակնկալութիւնից Կ. Պոլսոյ վերաբերմամբ եւ առ հասարակ ամէն մի նւաճողական մտադրութիւնից :

Խորհ. Ռուսաստանի բանւորա - դիւլացիական կառավարութիւնը ողատառականի բոլոր գաղտնի դաշնագիրները՝ [կնքւած] մի կողմէց միապետական Ռուսաստանի եւ միւս կողմէց Անդլիայի եւ Ֆրանսայի միջեւ ու յայտարարել է. «Ռուսաստանի բանւորա - դիւլացիական կառավարութիւնը չի ճանաչում առ հասարակ եւ ոչ մի գաղտնի դաշնագիր եւ ի մասնաւորի՝ Պարսկաստանի եւ Տաճկաստանի վերաբերմամբ» :

... Անգլիան այժմ աղատօրէն շարժում է Պարսկաստանում, Աֆղանիստանում, կովկասով եւ ձեր հայրենիքում : Այն օրից սկսած, երբ ձեր կառավարութիւնը Անդլիոյ տրամադրութեան տակ դրաւ նեղուցները, չկայ այլեւս ինքնուրոյն Տաճկաստան, չկայ այլեւս պատմական թիւրք քաղաք Ստամբուլը եւրոպական ցամաքամասի վրա, չկայ օսմանիան անկախ ժողովուրդ :

... Դուք ձեր ողջ կեանքի ընթացքում արիւն թափեցիք ինքնուրոյնութեան համար ... բայց այլ ամենը չօղնեց, ու դուք այժմ հեծում էք Անդլիոյ լուծի տակ :

... Ո՞ւր է փրկութիւնը :

Երկրի ու ձեր իրաւունքների փրկութիւնը ներքին եւ արտաքին գիշատիչներից՝ ձեր ձեռքին է ... Քանի զեռ ձեր երկիրը կառավարում են վաճառող փաշաներ եւ անսկզբունք կուսակցութիւններ, փրկութիւն չկայ ձեզ համար :

... Հետեւապէս, երկրի ճակատագիրը հարկ է որ ձեր ձեռքում լինի : Դուք պէտք է լինէք ձեր երկրի տէրը ...

... Անհրաժեշտ է, որ բովանդակ աշխարհէի աշխատաւորները միանան ընդդէմ համաշխարհային ստրկացնողների :

Այդ պատճառով եւ՝ Խորհրդային Ռուսաստանի բանւորա - դիւլացիական կառավարութիւնը յոյա ունի որ դուք, բանւորներ եւ դիւլացիներ Տաճկաստանի... եղբայրական ձեռք կը մեկնէք, միացեալ ուժերով դուրս քշելու եւրոպական դիշատիչներին եւ ոչնչացնելու, ուժաթափ անելու երկրի ներսը բոլոր նրանց, որ սովորել են ձեր գժրախառութեան վրա հիմնել իրենց երջանկութիւնը :